Հաստատում եմ՝
Հյուսիսային համալսարանի
Ռեկտոր՝ Մ. Մակիչյան

Հաստատված է համալսարանի
գիտական խորհրդի 2020թ.
սեպտեմբերի 11-ի որոշմամբ (արձ. №36)

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ, ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Երևան 2020թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Հյուսիսային համալսարան ՍՊԸ (այսուհետ՝ Համալսարան), վարչական (ուսումնաօժանդակ, սպասարկող) և ակադեմիական (մանկավարժադասախոսական, պրոֆեսորադասախոսական) աշխատակազմի և սովորողների համար (այսուհետ՝ Ներքին շահակիցներ) էթիկայի կանոնակարգ (այսուհետ՝ Կանոնակարգ) նորմատիվ իրավական ակտ է, որը սահմանում է աշխատակիցների և սովորողների էթիկական վարքագծի սկզբունքները, իրավունքներն ու պարտականությունները և կարգապահական տույժերը:

1.2 Կանոնակարգը կազմվել է՝ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ «Բարձրագույն կրթության մասին » օրենքը, ՀՀ Աշխատանքային օրենսգիրքը, «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարևարքության ամրապնդման և կոռուպցիայի դեմ պայքարի ծրագրի դրույթները»,[1] Եվրոպայի խորհրդի հինգ տասնյակ երկրների համար ընդհանրական «Էթինեդ» հարթակի[2], ինչպես նաև Եվրոպական խորհրդի կողմից ներկայացված «A CODE OF PRACTICE FOR ETHICAL CONDUCT IN HIGHER EDUCATION INSTITUTIONS»[3] , Համալսարանի կանոնադրությունը, ներքին կարգապահական կանոնները և այլ իրավական ակտերը:

1.3 Սույն Կանոնակարգի նպատակն է խրախուսել և ապահովել բարոյաէթիկական մշակույթը, մասնավորապես ակադեմիական ազնվության մշակույթը Համալսարանում գործունեություն ծավալող Ներքին շահակիցների շրջանում, զարգացնել նրանց բարոյահոգեբանական, գիտամանկավարժական և կազմակերպական հիմունքները, ստեղծել միջանձնային բարենպաստ փոխհարաբերություններ՝ բարձրացնելով Ներքին շահակիցների հեղինակությունը, պահպանելով Համալսարանի ամբողջականությունը և բարի համբավը՝ բարձրացնելով բուհի մրցունակությունը ներպետական և միջազգային ուսումնական հաստատությունների շրջանակներում, էթիկայի, մասնավորապես ակադեմիական ազնվությանը վերաբերող հարցերին տալ համապատասխան լուծումներ:

1.4 Համալսարանի աշխատակիցները և սովորողները կամավորության սկզբունքով պարտավորվում են հետևել սույն կանոնակարգով հաստատված էթիկայի կանոններին և նորմերին:

1.5 Էթիկայի կանոնների և նորմերի պահպանմանը հետևում և դրանց խախտման դեպքերում առաջացած խնդիրները լուծում է էթիկայի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով):

2. ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կանոնակարգի հիմնական խնդիրներն են.

1. Ներքին շահակիցներին ներկայացնել Համալսարանում էթիկայի նորմերը, դրանց պահպանման չափանիշները, խախտման դեպքում պատասխանատվություն կրելու ընթացակարգը:

---

[1] 2015- 2015-17թթ., դոնոր՝ Եվրոպայի խորհուրդ և Եվրոպական միություն, գործընկերներ՝ ՀՀ Կրթության և գիտության նախարարություն, պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ

[2] The Council of Europe Platform on Ethics, Transparency and Integrity in Education (ETINED)

[3] https://rm.coe.int/16806c85cb

2. Համալսարանում ձևավորել էթիկայի սկզբունքների պահպանման անհրաժեշտ մշակույթ և միջավայր:
3. Ներքին շահակիցների շրջանում խթանել և խրախուսել ազնիվ համալսարանական միջավայր ստեղծելու և պահպանելու պատասխանատվությունը:
4. Կանխարգելել ակադեմիական անազնվության դրսևորումները և զարգացնել ակադեմիական ազնվության հնարավորությունները:
5. Պաշտպանել Ներքին շահակիցների իրավունքներն ու շահերը, ապահովելով նրանց համար արդարություն:
6. Հաստատել կարգ ու կանոն Համալսարանի և Ներքին շահակիցների միջև փոխհարաբերություններում:
7. Հստակեցնել Ներքին շահակիցների պարտականությունների վերահսկման մեխանիզմները:
8. Անկողմնակալ և արդարացի լուծել էթիկայի նորմերի խախտմանը վերաբերող բոլոր հարցերը և դեպքերը:

3. ԷԹԻԿԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ներքին շահակիցների համար էթիկայի հիմնարար սկզբունքները և դրանց դրսևորման ձևերն են.

3.1.Բարևարքություն . Համալսարանի բոլոր Ներքին շահակիցների՝ բարոյական և էթիկական դրական սկզբունքների ու չափորոշիչների վրա հիմնված վարքագիծ է, որն համարվում է կապող օղակ էթիկական դրական սկզբունքների և կրթության որակի միջև և խոչընդոտում է կոռուպցիայի դրսևորումները: Ակադեմիական աշխատակազմի համար այն ազնիվ և բաց եղանակով գիտելիք ձեռք բերելու և տարածելու բարձր առաքելություն է, պահանջում է դրսևորել այդ առաքելությանը համահունչ վարքագիծ բոլոր Ներքին շահակիցների՝ և արտաքին շահակիցների հետ իրենց փոխհարաբերություններում:

Ուսանողների համար բարևարքությունը ազնվորեն գիտելիք ձեռք բերելու պարտավորություն է, որը կապված է Համալսարանի ակադեմիական աշխատակազմի համար սահմանված «Ակադեմիական բարևարքության» հետ:

3.2.Ազնվություն. Բացառում և արգելում է Համալսարանի Ներքին շահակիցներին կատարել խարդախություն, խաբեություն, շորթում, գողություն, ինչպես նաև այլ անազնիվ կամ քրեական բնույթի որև է արարք:

Ղեկավար պաշտոններ զբաղեցնող Ներքին շահակիցներն իրենց պատասխանատվության տակ գտնվող բնագավառներում ունեն հատուկ պարտավորություն՝ իրենց պաշտոնեական դիրքի շրջանակներում և միջանձնային հարաբերություններում լինել ճշմարտախոս, անաչառ, հարգալից, :

Աշխատակազմը դասավանդում, ուսուցում և գնահատում իրականացնելիս պետք է պահպանի ազնվություն: Սովորողների բոլոր տեսակի աշխատանքները պետք է գնահատվեն անաչառ՝ բացառելով կամայական բնույթի հովանավորչություն, արտոնություն, կողմնակալություն, կաշառքի դրսևորման կամայական ձև:

Սովորողները պարտավոր են՝ ուսումնառության և գնահատման գործընթացներում հավատարիմ լինել ազնվության սկզբունքին: Սովորողները գնահատման համար պետք է ներկայացնեն միայն իրենց կողմից կատարված աշխատանքներ (ինքնուրույն, գործնական, լաբորատոր, կուրսային՝ թե ավարտական)՝ խուսափելով գրագողությունից և խարդախությունից: Նրանք պետք է զերծ մնան հովանավորչությամբ և կաշառք առաջարկելով գնահատական ստանալու դրսևորումներից, լինեն ճշմարտախոս՝ Համալսարանի բոլոր Ներքին շահակիցների հետ փոխհարաբերություններում:

3.3. Ճշմարտացիություն և թափանցիկություն . Բխում են ազնվությունից և Համալսարանի բոլոր Ներքին շահակիցներից պահանջում են ասել միայն ճշմարտությունը և չստել բարձրագույն կրթության համակարգի ներսում իրականացվող ցանկացած տեսակի հաղորդակցության ժամանակ, գործել բացահայտ, կանխատեսելի և հասկանալի՝ խթանելու համար այլ Ներքին շահակիցների մասնակցությունը և հաշվետվողականությունը, ազատորեն հանրայնացնել ինչպես Համալսարանի որպես կազմակերպության, այնպես էլ Համալսարանի բոլոր Ներքին շահակիցների՝ որպես անհատների մասին տեղեկատվությունը՝ պահպանելով չափը և անձնական տվյալների գաղտնիությունը: Ակադեմիական աշխատակազմը պետք է հարգի ուսանողների տեսակետները և երաշխավորի նրանց մտքի ու խոսքի ազատությունը:

Ղեկավար և կառավարման պաշտոններ զբաղեցնող Ներքին շահակիցները պետք է ստեղծեն կազմակերպական և ֆինանսական այնպիսի կառուցվածքներ, որոնք կխթանեն գիտելիքների ստացումը և տարածումը ճշմարտացիության սկզբունքի հիման վրա:

Սովորողները պարտավոր են զարգացնել իրենց գիտելիքները՝ հիմնվելով ճշմարտացիության սկզբունքի վրա: Նրանք ոչ մի պատասխանատվություն չեն կրում Համալսարանի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման թափանցիկության ապահովման համար, սակայն նրանք պետք է պատասխանատվություն դրսևորեն սեփական ակադեմիական գործունեության թափանցիկության մասով ներկայացվող ցանկացած պահանջի դեպքում:

3.4 Վստահություն և հարգանք այլոց նկատմամբ. Պահանջվում է հարգանք ցուցաբերել բարձրագույն կրթության համակարգում ներգրավված բոլոր շահառուների և շահագրգիռ կողմերի արժանապատվության, ֆիզիկական, հոգեկան ու մտավոր ամբողջականության ու անձեռնմխելիության նկատմամբ, ճանաչել Ներքին շահակիցների՝ իրենց մասնավոր կյանքը պաշտպանելու, և ֆիզիկական, հոգեբանական բռնությունից պաշտպանված լինելու ընդհանուր իրավունքները , միմիանց հետ հարաբերություններում դրսևորել համապատասխան վարքագիծ՝ աշխատանքային գործունեության մեջ ճիշտ համագործակցություն և կոլեգիալություն ապահովելու համար:

Կարևոր է պահպանել նաև միմյանց նկատմամբ վստահություն, բոլոր Ներքին շահակիցները պետք է վստահ լինեն այլոց ազնվության, ճշմարտացիության և բարեվարքության նկատմամբ և ակնկալեն նրանց վստահությունը իրենց նկատմամբ:

Ակադեմիական աշխատակազմը պետք է հարգանք ցուցաբերի ուսանողների դասավանդման և ուսուցման փոխհարաբերություններում, գործընկերների հետ գործնական հարաբերություններում, ունենա փոխադարձ վստահություն ակադեմիական համայնքի բոլոր անդամների նկատմամբ , խթանի գաղափարների ազատ փոխանակումը, ստեղծագործական մտքի և անձի զարգացումը:

3.5. Հաշվետվողականություն. Համալսարանի բոլոր Ներքին շահակիցների լիազորությունների թափանցիկ և պատշաճ իրականացումն է և հարգանքը միմյանց նկատմամբ:

Հաշվետվողականությունը ապահովվում է ըստ Համալսարանում գործող իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացման և շահակիցների առջև հաշվետվողականության ապահովման քաղաքականություն:

Ղեկավար և կառավարման պաշտոններ զբաղեցնող Ներքին շահակիցները կամային հիմունքներով պարտավոր են պատասխանատվություն կրել իրենց լիազորությունների պատշաճ կատարման համար:

Սովորողները «Լիազորություններ» չունեն , սակայն այն սովորողները , որոնք մասնակցում են Համալսարանի կառավարման գործընթացներին, պետք է հաշվետու լինեն սովորողների կառույցների առաջ, որոնց իրենք ներկայացնում են: Սովորողները կարող են հաշվետվողականություն ունենալ Համալսարանի այն աշխատակազմի նկատմամբ, որը կապված է իրենց ուսումնական առաջադիմության և վարքագծի դրսևորման հետ:

3.6. Արդարացիություն. միմյանց հետ հարաբերվելիս համալսարանի բոլոր Ներքին շահակիցների անկողմնակալ, առանց խտրականության և ազնիվ վարվեցողությունն է:

Ակադեմիական աշխատակազմը դասավանդման, ուսանողների գնահատման, հետազոտության, Ներքին շահակիցների առաջխաղացման հետ կապված ցանկացած գործընթացում պետք է ապահովի արդարացիություն՝ հիմնվելով թափանցիկ, անկողմնակալ, կանխատեսելի, հետևողական և օբյեկիվ չափանիշների վրա:

Ղեկավար և կառավարման պաշտոններ զբաղեցնող Ներքին շահակիցները պետք է ցուցաբերեն արդարացիություն բոլոր աշխատակիցների և ուսանողների հետ փոխհարաբերություններում:

Սովորողները պետք է դրսևորեն արդարացիություն համակուրսեցիների և համալսարանի աշխատակազմի հետ հարաբերություններում: Ուսանողական կառույցների ներկայացուցիչները պետք է իրենց պարտականությունները կատարեն՝ պահպանելով մյուսների նկատմամբ արդարացիության սկզբունքը:

3.7. Հավասարություն, արդարություն և սոցիալական արդարություն. արդար, թափանցիկ, ներառական և կայուն քաղաքականությունն ու գործելակերպը կապված են տարիքի, հաշմանդամության, գենդերի ու գենդերային ինքնության, ռասայի, էթնիկ պատկանելիության, կրոնի ու դավանանքի, սեռական կողմնորոշման և բարձրագույն կրթության հասանելիության հետ: Բոլոր Ներքին շահակիցները հավասարության, արդարության և սոցիալական արդարության

նշված հայեցակետերը պետք է դիտարկեն որպես իրենց նկատմամբ գործող սկզբունքներ: Ակադեմիական աշխատակազմը իր բոլոր գործընթացներում պետք է դրսևորի հավասարության, արդարության և սոցիալական արդարության սկզբունքներին համահունչ գործունեություն ուսանողների և գործընկերների հետ բոլոր փոխհարաբերություններում: Ակադեմիական աշխատակազմը պետք է պատրաստակամ մասնակցի ուսանողների հավաքագրման, ուսումնառության ծրագրերում ուսանողների առաջընթացին խանգառող խոչընդոտների հաղթահարման, սոցիալական կամ մասնակցային ժողովրդավարության բնագավառում հաստատությանը օժանդակելու և այլն:

Ղեկավար և կառավարման պաշտոններ զբաղեցնող Ներքին շահակիցները հատուկ պատասխանատվություն են կրում համապատասխան քաղաքականությունների մշակման , բարեհաջող ներդրման և մշտադիտարկման համար: Սովորողները պատասխանատվություն չեն կրում Համալսարանի հասանելիության ապահովման , քաղաքականությունների մշակման և իրականացման համար, սակայն նրանք պետք է դրսևորեն ոչ խտրական և անկողմնակալ վերաբերմունք համակուրսեցիների և Համալսարանի աշխատակիցների հետ փոխհարա-բերություններում:

3.8. Կրթական համակարգի և կրթական հաստատությունների ժողովրդական և էթիկական ղեկավարում և կառավարում. բոլոր Ներքին շահակիցները պետք է ընդունեն, որ Համալսարանի ղեկավարումը և կառավարումը հիմնված է ժողովրդավարական ներգրավվածության վրա և պետք է իրականացվեն էթիկայի հիմունքներով ղեկավարվող առաջնորդների կողմից: Իսկ աշխատակիցների ներգրավվածությունը բարձրացնելու համար որոշումների կայացման մեջ կարևորվում է բոլոր Ներքին շահակիցների մասնակցության խրախուսումը ղեկավար անձնակազմի կողմից: Ակադեմիական աշխատակազմն իր վարքագծում պետք է ցուցաբերի Համալսարանի ժողովրդավարական ղեկավարմանն ու կառավարմանն աջակցելու լիարժեք հանձնառություն: Ղեկավար և կառավարման պաշտոններ զբաղեցնող Ներքին շահակիցներն ունեն հստակ պարտավորություն՝ ապահովելու համալսարանի ղեկավարումը և կառավարումը ժողովրդավարական, նաև էթիկական հիմունքներով՝ հենված աշխատակազմի լիարժեք ներգրավվածության վրա:

Սովորողները պետք է դրական արձագանքեն Համալսարանի ղեկավարմանը և կառավարմանը մասնակցելու ցանկացած հնարավորությանը, մասնակցություն ունենան կրթության որակի ապահովման և բարելավման գործընթացներում, որպեսզի կարողանան հետադարձ կապ ապահովել դասավանդման և ուսումնառության վերաբերյալ: Ուսանողական կառույցների ներկայացուցիչներն իրենց պաշտոններում պետք է ապահովեն էթիկայի նորմերին համապատասխան վարքագից:

3.9.Որակյալ կրթություն . Համալսարանի Ներքին շահակիցների անվերապահ հանձնառությունն է բարձր որակի կրթություն տրամադրելը:

Ակադեմիական աշխատակազմը Համալսարանի ուսանողներին պետք է ապահովի հնարավորինս բարձր որակի կրթությամբ, նպաստի ուսանողների բարձր առաջադիմությանը , ապահովի գիտական և կրթական բարձր

արդյունքներ, ուսանողների հետ կատարի որակյալ, ճիշտ և ազնիվ ակադեմիական աշխատանք, ցուցաբերի ակտիվ մասնակցություն կրթության որակի բարելավման աշխատանքներում՝ նպաստելով մասնագիտական ոլորտում գիտելիքի առավելագույն զարգացմանը:

Ղեկավար և կառավարման պաշտոններ զբաղեցնող Ներքին շահակիցները պետք է մշակեն համապատասխան քաղաքականություններ, ընթացակարգեր, աջակցեն դրանց իրականացմանը:

Սովորողները պետք է իրենց ակադեմիական աշխատանքը կատարեն որակով՝ մասնակից դառնալով գիտելիքի ձեռքբերմանը և տարածմանը Համալսարանի հիմնական սկզբունքներին համապատասխան:

3.10.Անձի կատարելագործում և համակարգերի բարելավում. Համալսարանի բոլոր Ներքին շահակիցների մասնագիտական պարտավորությունն է՝ ապահովելու մասնագիտական զարգացումը և համակարգի շարունակական բարելավումը: Ակադեմիական աշխատակազմի յուրաքանչյուր անդամ պետք է մասնագիտական պարտավորություն կրի իր անձնական զարգացման, դասավանդման առաջավոր փորձի ներդրման և տարածման համար, ապահովի կապը իր մասնագիտական ոլորտի գիտական նվաճումների, իր զարգացման և Համալսարանի ընթացիկ զարգացումների միջև:

Ղեկավար և կառավարման պաշտոններ զբաղեցնող Ներքին շահակիցները պետք է կատարելագործեն իրենց ղեկավարման և կառավարման հմտությունները:

Սովորողները պետք է արժևորեն Համալսարանի ընդհանուր համակարգային կատարելագործումը, օգտագործեն անձի կատարելագործման համար ընձեռնված բոլոր հնարավորությունները և ձգտեն օժանդակել նրան:

3.11. Ինստիտուցիոնալ ինքնավարություն/ ինստիտուցիոնալ անկախություն Համալսարանի բոլոր Ներքին շահակիցների կողմից իրենց համապատասխան գործունեության մեջ ակադեմիական սկզբունքի կարևորումն ու պահպանումն է: Ակադեմիական աշխատակազմը անհրաժեշտության դեպքում պետք է մասնակցի ինստիտուցիոնալ ինքնավարության/ինստիտուցիոնալ անկախության հասնելու և պահպանելու խնդրի հանրային քննարկումը և այդ գործում ստանձնի ղեկավար դեր: Ղեկավար և կառավարման պաշտոններ զբաղեցնող Ներքին շահակիցներն պետք է արժևորեն այդ ինքնավարությունը/անկախությունը և իրենց գործառույթները կատարեն լիարժեք և գիտակցված: Ուսանողները պետք է կարևորեն Համալսարանի կենտրոնացված քաղաքական հսկողությունից զերծ ինստիտուցիոնալ ինքնավարություն /ինստիտուցիոնալ անկախությունը:

4. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ

Ակադեմիական ազնվությունը էթիկայի կարևորագույն սկզբունքներից է, որի համակարգը ակադեմիական գործընթաց է, հիմնված կրթական հնարավորությունների վրա:

Ակադեմիական ազնվության պահպանումը Համալսարանի բոլոր Ներքին շահակիցների համար պետք է դառնա պատվի կանոն. «Ես լինելու եմ ակադեմիապես ազնիվ իմ բոլոր ակադեմիական աշխատանքներում և չեմ հանդուրժելու այլ անձանց ակադեմիական անազնվությունը»:

4.1 Ակադեմիական ազնվությունը սահմանվում է որպես 5 հիմնարար արժեքների՝ ազնվության, վստահության, անկեղծության, հարգանքի և պատասխանատվության պահպանման պարտավորություն՝ անկախ իրավիճակից:

4.2 Ակադեմիական ազնվությունն անհրաժեշտ է համալսարանի առաքելության և հիմնական նպատակների արդյունավետ իրականացման, կառուցվածքը և ամբողջությունը պահպանելու, ազնիվ և փոխադարձ վստահության մթնոլորտի ապահովման, դասական համալսարանական միջավայրի ձևավորման և որակյալ կրթական ծառայությունների տրամադրման համար:

4.3. Ակադեմիական ազնվություն. կատարել բոլոր ակադեմիական աշխատանքները առանց գրագողության, խաբեության, ստելու, խարդախության, գողության, առանց այլ անձանցից արգելված օգնություն ստանալու կամ տեղեկատվության ցանկացած հանրամատչելի աղբյուրից օգտվելու:

Ակադեմիական աշխատանքը ցանկացած գործողություն է, որը կատարվել է այն աշխատանքի համար, որը ներկայացվել է կամ ներկայացվելու է որպես սեփական գործունեության արդյունք:

Սովորողների համար ակադեմիական աշխատանքը Համալսարանի կրթական ծրագրերի և դասընթացների համար որպես ակադեմիական առաջադիմության արդյունք ներկայացված ցանկացած աշխատանք է: Ակադեմիական աշխատանքներ են համարվում ավարտական և կուրսային աշխատանքները, լսարանային և տնային առաջադրանքները, քննությունները, ստուգարքները, կիսամյակային տարբեր ինքնուրույն և թեմատիկ աշխատանքները, հաշվետվությունները, ներկայացումները, ստեղծագործական աշխատանքները, լաբորատոր աշխատանքները և գիտահետազոտական փորձերը, հաշվարկները, պրակտիկայի շրջանակներում ըստ պլանի կատարված աշխատանքները, թեզերը և այլն:

4.4 Ակադեմիական ազնվություն է համարվում՝

4.4.1. քննական աշխատանքների անցկացման ընթացքում ազնիվ և պատշաճ պահվածքը,

4.4.2 գիտական և գիտահետազոտական աշխատանքներում մտքերի, գաղափարների իրական հեղինակներին նշելը,

4.4.3. իրական ոչ կեղծ հետազոտական արդյունքներով հիմնավորված աշխատանքի ստեղծումը,

4.4.4. մտավոր սեփականության բոլոր տեսակների պաշտպանությունը:

5. ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՆԱԶՆՎՈՒԹՅՈՒՆ

5.1 Ակադեմիական անազնվություն՝ նշանակում է դիտավորյալ կերպով կատարել, կամ փորձել կատարել, կամ օգնել այլ անձին կատարելու ցանկացած ակադեմիակն աշխատանք, կամ դրսևորել վարքագիծ, որը չի համապատասխանում ակադեմիական ազնվության չափորոշիչներին:

5.2 Ակադեմիական անազնվություն է համարվում՝

- Գրագողությունը, որն առանց համապատասխան աղբյուրի վկայակոչման ակադեմիական աշխատանքներում ոչ հանրամատչելի մտքեր, գաղափարներ, կարծիքներ կամ տեսություններ ընդգրկելն է: Գրագողություն է համարվում՝
- ուրիշի ստեղծագործությունը, գաղափարները, հետազոտությունները և մտքերը որպես սեփականը ներկայացնելը կամ ուրիշի ստեղծագործության՝ իր անվամբ անօրինական հրապարակումը՝ այլ կերպ հեղինակության յուրացումը,
- որևէ աշխատանքի մասնակի կամ ամբողջական ընդօրինակումը տարբեր աղբյուրներից, ինչպիսիք են՝ համացանցը, հոդվածները, գրքերը, ամսագրերը և այլն՝ առանց իրական հեղինակին և աղբյուրը նշելու,
- օգտագործված աղբյուրների և գրականության ցանկի ձևավորումը ակնհայտ խախտումներով,
- սխալ հղումներ տալը, երբ աշխատանքում Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկում ներառվում է գիրք, որին հեղինակն անձամբ չի ծանոթացել և աշխատանքում դրան հղում չի արել,
- այլ անձի կողմից կատարած աշխատանքի կամ այլ առաջադրանքների գնումը կամ ձեռքբերումը և որպես սեփական աշխատանք ներկայացնելը,
- վիճակագրական կամ դեմոգրաֆիական տեղեկություններ կրկնելը, որոնք հանրամատչելի չեն և սկզբնապես կազմվել են այլ անձի կողմից,
- նույն աշխատանքը որպես տարբեր առաջարանքներ կամ տարբեր վերնագրերով աշխատանքներ ներկայացնելը:

5.2.2 Արգելված աջակցությունը. Դասախոսի կամ սովորողի կողմից ցանկացած քննության կամ ակադեմիական աշխատանքի վերաբերյալ արգելված աջակցության տրամադրումը կամ ստացումն է: Արգելված աջակցություն են համարվում .

- քննությունների պատասխանների արտագրելը կամ արտագրել թույլատրելը,
- քննությունների ժամանակ տվյալ քննական նյութին վերաբերող տեղեկությունների փոխանցումը կամ ստացումը,
- դեռ չանցկացված քննությունների պատասխանների տրամադրումը կամ ստացումը,
- քննության ընթացքում ծածկագրերից օգտվելը,
- գրավոր քննությունների ժամանակ նորագույն տեխնոլոգիաներից օգտվելը,
- այլ անձի փոխարեն ակադեմիական աշխատանքի կամ դրա մի մասի կատարումը կամ թույլատրելը, որ այլ անձ ուսանողի փոխարեն կատարի ակադեմիական աշխատանքը,
- խմբակային աշխատանքի ներկայացումը կամ ներկայացման թույլատրելը, երբ խմբակային աշխատանքի պատրաստմանը կամ կատարմանը ոչ բոլոր անդամներն են մասնակցել,
- էլեկտրոնային տարբեր սարքերի կիրառումը կամ թույլատրելը այլ դեպքերում, երբ դրանց կիրառության հատուկ թույլտվություն չկա,
- աշխատանքի անբարեխիղճ կատարմանն աջակցելը,
- գնահատական ստանալու շուրջ սովորողի և դասախոսի միջև համաձայնությունը, դասախոսին միջնորդումը:

5.2.3. Կեղծումը. ցանկացած աշխատանքի կատարման համար կաշառելը կամ նրա կատարման վերաբերյալ կեղծ տեղեկատվության տրամադրելն է:
Կեղծում են համարվում՝

- ակադեմիական աշխատանքի անբավարար կատարման կամ չկատարման դեպքում կեղծ պատճառաբանությունների ներկայացումը,
- այլ գնահատական ստանալու նպատակով գնահատականների , պատասխանների կամ հաճախելիության գրանցումների փոփոխումը,
- ակադեմիական առաջադիմության համար արդեն ներկայացված ակադեմիական աշխատանքի ներկայացումը, բացառությամբ այն դեպքերի երբ աշխատանքը ներկայացվել է համապատասխան դասախոսի գիտությամբ կամ նախկինում կատարած աշխատանքը,
- ցանկացած ակադեմիական աշխատանքի ներկայացումից հետո նրա փոփոխելը, բացառությամբ այն դեպքերի եթե նման փոփոխությունները մտնում են առաջադրանքի պահանջների մեջ,
- այլ սովորողի ակադեմիական աշխատանքի վնասումը կամ կեղծումը,
- ցանկացած լաբորատոր կամ փորձնական աշխատանքի արդյունքների կամ ցանկացած տվյալների և տեղեկությունների կեղծումը,
- համակարգչային սարքավորումների կամ լաբորատոր սարքավորումների վնասումը ակադեմիական աշխատանքի գնահատումը փոփոխելու կամ կանխելու համար,
- այլ անձին պատկանող համակարգչային նշանաբառից օգտվելը,
- ինտերնետային կայքի բովանդակության կամ մատչելիության վնասումը,
- այլ անձի փոխարեն գործելը՝ համակարգչային ռեսորսներ ձեռք բերելու նպատակով:

5.3 Գողությունը ակադեմիական ցանկված աշխատանքի վերաբերյալ (քննությունները, գնահատականների գրանցումները, գնահատման ձևերը, գրքերը, լաբորատոր նյութերը, տվյալները և այլն) ձեռք բերելն է:

5.4 Ցանկացած այլ գործողությունը, որն անարդար ձևով առավելություն է տալիս աշխատակցին կամ ուսանողին և ազդում նրա արձանագրած արդյունքների վրա:

6. ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝

6.1 Էթիկայի հանձնաժողովը կազմվում է ոչ պակաս, քան 5 անդամից,

6.2 էթիկայի հանձնաժողովի գործունեության ժամկետի և կազմի հաստատումը, ինչպես նաև դրանց փոփոխություններն իրականացվում են Հյուսիսային Համալսարանի խորհրդի կողմից,

6.3 հանձնաժողովի նախագահը ընտրվում է հանձնաժողովի անդամների կողմից՝ բաց քվեարկությամբ,

6.4 էթիկայի հանձնաժողովի կազմը կարող է փոփոխվել հետևյալ դեպքերում.

1. հանձնաժողովի անդամի կամ անդամների՝ հանձնաժողովի կազմից դուրս գալու վերաբերյալ դիմումի համաձայն,

2. հանձնաժողովի կազմից որևէ մեկի կամ մեկից ավել անդամների ոչ պատշաճ աշխատանքի կամ ոչ օբյեկտիվ աշխատանքի վերաբերյալ հանձնաժողովի նախագահի զեկուցման համաձայն,

3. հանձնաժողովի անդամների կամ նախագահի գործունեության վերաբերյալ Ներքին շահակիցների կողմից արձանագրված բողոքարկման համաձայն,

4. էթիկայի հանձնաժողովը բողոքների վերաբերյալ որոշումներ կայացնում է համաձայն սույն Կանոնակարգի , Համալսարանի ներքին կարգապահական կանոնների, և համապատասխան կանոնակարգերի:

6.5. էթիկայի հանձնաժողովն իր գործունեության ընթացքում պարտավորվում է ապահովել թափանցիկություն, օբյեկտիվություն, արդարամտություն և անաչառություն:

6.6. էթիկայի հանձնաժողովի անդամները պարտավոր են պահպանել գաղտնիություն ստացված բողոքների և Ներքին շահակիցների վերաբերյալ:

6.7. էթիկայի հանձնաժողովի գործառույթներն են՝

1. հետևողական լինել համալսարանում էթիկայի կանոնների պահպանմանը,

2. էթիկայի կամ ակադեմիական ազնվության խախտումների վերաբերյալ Ներքին շահակիցների բողոքների դեպքում իրականացնել համապատասխան գործողություններ՝համաձայն սույն Կանոնակարգի,

3. յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում մշտապես իրականացնել ուսումնասիրություններ/հետազոտություններ/,

4. տարեվերջին հետազոտությունների արդյունքների և էթիկայի կանոնների խախտման և դրանց լուծման վերաբերյալ Համալսարանի ռեկտորին ներկայացնել հաշվետվություն,

6.8. էթիկայի կանոնների խախտման առկայության դեպքի վերաբերյալ հանձնաժողովի կողմից կայացված որոշումը հանձնաժողովի նախագահը գրավոր կերպով ներկայացնում է Համալսարանի ռեկտորին:

7. Համալսարանի ղեկավարների, վարչական աշխատակազմի էթիկայի վարքագծի կանոնները՝

7.1. ՀՀ օրենսդրության համաձայն՝ Համալսարանի նշանակված կամ ընտրված ղեկավարը (այդ թվում՝ ռեկտոր, ֆակուլտետների դեկաններ, ամբիոնների վարիչներ և ղեկավարման իրավասություն ունեցող անձանց) և վարչական աշխատակազմի անդամների վարքագիծը պետք է համապատասխանի էթիկայի ընդհանուր սկզբունքներին,

7.2. Հյուսիսային համալսարանի ռեկտորի իրավունքներն ու գործառույթները սահմանված են ՀՀ օրենքով, Համալսարանի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով,

7.3. Համալսարանի ղեկավարների իրավունքները սահմանված են ՀՀ օրենքով, Համալսարանի կանոնադրությամբ, աշխատանքային պայմանագրով, ներքին կանոնակարգերով և այլ իրավական ակտերով,

7.4. վարչական աշխատակազմի իրավունքներն ու գործառույթները սահմանված են «Բարձրագույն և հետբուհական կրթության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ Աշխատանքային օրենսգրքով, Համալսարանի կանոնադրությամբ, ներքին կանոնակարգերով և այլ իրավական ակտերով,

7.5. Համալսարանի ստորաբաժանումների ղեկավարները և վարչական անձնակազմի անդամները իրավունք ունեն էթիկայի սկզբունքների ցանկացած խախտման մասին գրավոր հայտնել վերադաս մարմնին՝ առանց իրենց անձի համար անբարենպաստ հետևանքներ առաջանալու մտավախության,

7.6. Համալսարանի ղեկավար պաշտոններ զբաղեցնող աշխատակիցները պարտավոր են՝

7.6.1. իրենց գործառույթները ու պարտականությունները վեր դասել Համալսարանի շահերն իրենց սեփական շահերից և չձգտել շահույթ ստանալ՝ օգտագործելով իրենց զբաղեցրած պաշտոնը,

7.6.2. չընդունել որոշակի գործելու կամ չգործելու որևէ հրահանգ ցանկացած անձից (բացառությամբ վերադասի) կամ որևէ քաղաքական կուսակցությունից, արհմիությունից կամ կրոնական խմբից,

7.6.3. կադրերի հետ կապված գործընթացներում (այդ թվում՝ աշխատակազմի նշանակման և առաջխաղացման), ֆինանսական, պայմանագրային և նման այլ հարցերում իրենց կամ իրենց ընտանիքի անմիջական անդամի որևէ անձնական շահի առկայության դեպքում գրավոր հայտնել վերադաս մարմնին,

7.6.4. չպահանջել կամ չընդունել որևէ կաշառք կամ այլ ֆինանսական միջոց, չփորձել ստանալ կամ ընդունել որևէ այլ անձնական օգուտ, որը կարող է ազդել իրենց գործունեության վրա,

7.6.5. կաշառելու կամ անձնական օգուտ առաջարկելու ցանկացած փորձի մասին անմիջապես հայտնել ռեկտորին (իսկ ռեկտորի դեպքում՝ վերադաս մարմնին),

7.6.6. չվատնել կամ սխալ չօգտագործել Համալսարանի ղեկավարությանը պատկանող անձնական կամ առևտրային տեղեկությունները՝ անձնական կամ որևէ այլ անձի համար շահ ստանալու նպատակով,

7.6.7. իրենց ենթակայության տակ գտնվող աշխատակիցներին իրազեկել էթիկայի կանոնակարգի, համապատասխան օրենքների ու կանոնների, իրենց պարտականությունների և իրավունքների մասին,

7.6.8.ապահովել, որ իրենց իրավասության ներքո գտնվող բոլոր անձինք իրազեկված լինեն էթիկայի կանոններին ր նորմերը չպահպանելու հետևանքներին և նպաստել էթիկական վարվեցողության պահպանմանը,

7.6.9.իրականացնել ներքին աուդիտի կամ ռիսկերի գործընթացներ, որոնք հնարավորություն կտան անդամներին համոզվելու, որ հաստատության ֆինանսական և մյուս գործերն իրականացվում են արդար, թափանցիկ, գործուն ր արդյունավետ եղանակով,

7.6.10. հարգել Համալսարանի բոլոր Ներքին շահակիցների արժանապատվությունը:

7.7 Համալսարանի վարչական աշխատակազմի անդամները պարտավոր են՝

1. վեր դասել Համալսարանի շահերն իրենց սեփական շահերից և չձգտել շահույթ ստանալ պաշտոնական դիրքի օգտագործմամբ կամ չարաշահելով այն,

2. պարտականությունների կատարման ժամանակ լինել ազատ, անկաշկանդ, չընդունել որոշակի եղանակով գործելու կամ չգործելու հրահանգ՝ ցանկացած անձի (բացառությամբ վերադասի կամ համալսարանի ռեկտորի), այլ կազմակերպության, քաղաքական որևէ կուսակցության, արհմիության, կրոնական կամ որևէ այլ արտաքին աղբյուրի կողմից,

3. քննարկման ենթակա օրակարգային հարցերի դեպքում (ներառյալ՝ ՄՌԿ բաժնի կողմից աշխատակիցների նշանակման և առաջխաղացման, ֆինանսական, պայմանագրային և այլ հարցերը) իրենց կամ ընտանիքի անմիջական անդամի որևէ անձնական շահի առկայության դեպքում հայտնել այդ մասին նախքան քննարկման սկիզբը և պաշտոնապես հրաժարվել այդ հարցերի քննարկմանը մասնակցելուց,

4. չպահանջել կամ չընդունել որևէ կաշառք կամ այլ ֆինանսական միջոց, կամ չփորձել ստանալ կամ ընդունել որև է այլ անձնական օգուտ, որը կարող է ազդեցություն գործել իրենց հետագա գործունեության վրա որոշումներ կայացնելիս,

5. կաշառելու կամ անձնական օգուտ առաջարկելու ցանկացած փորձի մասին հայտնել անմիջական ղեկավարին,

6. համալսարանի կառավարման և ղեկավարման հետ կապված կանոններ ընդունելու և կիրառելու իրենց կոլեկտիվ իրավասությունը կամ անձնական պատվիրակված իրավասությունն իրականացնելիս ապահովել, որ այդ կանոնները համապատասխանեն գործող օրենսդրությանը, Համալսարանի կանոնադրությանը և կանոնակարգում սահմանված էթիկայի սկզբունքներին,

7. հարգել համալսարանի աշխատակիցների և սովորողների արժանապատվությունը:

8. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ (ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ) ԷԹԻԿԱՅԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ՝

8.1 ՀՀ օրենսդրության համաձայն՝ համալսարանի նշանակված կամ ընտրված ակադեմիական աշխատակազմի անդամների վարքագիծը պետք է համապատասխանի էթիկայի ընդհանուր սկզբունքներին,

8.2 Համալսարանի ակադեմիական աշխատակազմի իրավունքները սահմանված են ՀՀ օրենքով, Համալսարանի կանոնադրությամբ, աշխատանքային պայմանագրով, ներքին կանոնակարգերով և այլ իրավական ակտերով,

8.3 Համալսարանի ակադեմիական աշխատակազմի աշխատանքի նշանակումը, առաջխաղացումը և աշխատանքից ազատումը իրականացվում է Համալսարանի պրոֆեսորադասախոսական մրցույթային կարգի համաձայն,

8.4 Համալսարանի ակադեմիական աշխատակազմի անդամներն իրավունք ունեն.

8.4.1. ազատ արտահայտվելու և տեղեկություն ստանալու,

8.4.2. գնահատվելու որպես գիտնական և դասավանդող՝ ելնելով մտավոր և մասնագիտական չափանիշներից, առանց իրենց քաղաքական ու կրոնական հայացքների կամ անձնական նախապատվության որև է այլ հանգամանքի,

8.4.3. որոշելու իրենց կողմից դասավանդվող դասընթացի բովանդակությունը, կազմակերպման և մատուցման ձևը՝ ուսումնական պլանների պահանջներին համապատասխան,

8.4.4. գնահատելու ուսանողների կատարողականը և ձեռքբերումները՝ համալսարանի գնահատման քաղաքականության և նախապես սահմանված գնահատման չափանիշների հիման վրա,

8.4.5. չընդունելու որոշակի ձևով գործելու կամ չգործելու որևէ հրահանգ ցանկացած անձից, որևէ քաղաքական կուսակցությունից, արհմիությունից կամ կրոնական խմբից, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,

8.4.6. էթիկայի սկզբունքների ցանկացած ենթադրյալ խախտման մասին գրավոր հայտնելու հանձնաժողովին՝ առանց իրենց անձի համար անբարենպաստ հետևանքներ առաջանալու մտավախության:

8.5. Համալսարանի ակադեմիական աշխատակազմի անդամները պարտավոր են.

8.5.1. վեր դասել Համալսարանի շահերն իրենց սեփական շահերից և չձգտել շահույթ ստանալ՝ օգտագործելով իրենց պաշտոնը՝ գործող օրենսդրությանը հակառակ,

8.5.2. համալսարանի ներսում կամ դրանից դուրս ցանկացած անձից կամ խմբից չպահանջել կամ չնդունել կաշառք կամ որև է այլ անօրինական ֆինանսական միջոց, չփորձել ստանալ կամ ընդունել որև է անձնական օգուտ, որը կարող է ազդել իրենց հետագա գործունեության վրա և համալսարանի կանոններով նախատեսված համապատասխան մարմնին անմիջապես հայտնել կաշառելու կամ անձնական շահ առաջարկելու ցանկացած փորձի մասին,

8.5.3. չվատնել Համալսարանի ռեսուրսները, կամ սխալ չօգտագործել Համալսարանի տնօրինության տակ գտնվող անձնական կամ առևտրային տեղեկությունները, այդ թվում՝ մտավոր սեփականության մասին տեղեկությունները՝ անձնական կամ որևէ այլ անձի կամ խմբի համար շահ ստանալու նպատակով,

8.5.4. դրսևորել էթիկական վարվեցողության ընդհանուր սկզբունքներին համապատասխան վարքագիծ ակադեմիական աշխատակազմի կամ ընդունելության գնահատման, քննության և ուսանողներին վերաբերող այլ գործողությունների հետ առնչվող մարմինների նշանակման, առաջխաղացման կամ այլ լիազորություններին վերաբերող հարցերում մասնակցություն ցուցաբերելու ժամանակ,

8.5.5. ցուցաբերել հարգանք աշխատակիցների հետ փոխհարաբերություններում

անկախ տարիքից և ղբաղեցրած պաշտոնից,

8.5.6. չհետապնդել գործընկերներին և նրանց նկատմամբ չդրսևորել խտրականություն, հարգել բազմակարծությունը և արտահայտվելու ազատությունը,

8.5.7. հետազոտական գործունեության ընթացքում պահպանել ակադեմիական ազնվության կանոնները և էթիկայի սկզբունքները՝ անձնական տվյալների պաշտպանության առումով,

8.5.8. ապահովել իրենց ենթակայության ներքո աշխատող բոլոր անձանց իրազեկ լինելը համապատասխան օրենսդրությանը և կանոններին, դրանք չպահպանելու հետևանքներին և նպաստել էթիկական վարվեցողության պահպանմանը,

8.6 Համալսարանի դասախոսը պարտավոր է՝

8.6.1. հարգել համալսարանի ուսանողներին ՝ անկախ նրանց միջև եղած տարբերություններից ներառյալ (քաղաքական և կրոնական), և խուսափել ցանկացած շահագործումից, հետապնդումից և ուսանողների նկատմամբ խտրական վերաբերմունքից,

8.6.2. պաշտպանել ուսանողների ակադեմիական ազատությունը,

8.6.3. պահպանել փոխադարձ հարգանքի և վստահության սկզբունքը ուսանող-դասախոս փոխհարաբերություններում,

8.6.4. պահպանել օբյեկտիվություն, ճշմարտացիություն և ազնվություն յուրաքանչյուր ուսանողի նկատմամբ,

8.6.5. չթելադրել և չպարտադրել ուսանողին սեփական կամքը և հայացքները,

8.6.6. ուսանողի հետ չգնալ որևէ համաձայնության, ինչը կդրսևորվի որպես ակադեմիական ազնվության արդյունք

8.6.7. պահպանել ակադեմիական ազնվությունը և հետամուտ լինել դրա մակարդակի բարձրացմանը,

8.6.8. որպես կրթական ծրագիր իրականացնող՝ ուսանողներին իրազեկել էթիկայի կանոնագրքի, իրենց պարտականությունների և իրավունքների մասին:

9. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ՝

9.1. ՀՀ օրենսդրության համաձայն ՝ Համալսարան ընդունված ուսանողների վարքագիծը պետք է համապատասխանի էթիկայի ընդհանուր սկզբունքներին, դրանք պետք է կիրառելի լինեն Համալսարանի բոլոր Ներքին շահակիցների հետ հարաբերություններում,

9.2 Համալսարանի ուսանողների իրավունքները սահմանված են ՀՀ օրենքով, Համալսարանի կանոնադրությամբ, Համալսարանի և ուսանողի միջև կնքված պայմանագրով, ներքին կանոնակարգերով և այլ իրավական ակտերով,

9.3 Համալսարանի ուսանողը իրավունք ունի՝

9.3.1. զերծ մնալու այլ անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքից՝ անկախ ռասայից, կրոնից, էթնիկ ծագումից, քաղաքական հայացքներից, տարիքից, սեռից, հաշմանդամության կամ անձնական բնույթի այլ հանգամանքից,

9.3.2. ազատ արտահայտվելու և մասնակցելու հավաքներին՝ առանց դասերի արդյունավետ իրականացմանը խոչընդոտելու , էթիկայի սկզբունքները խախտելու ,

9.3.3. տեղեկացված լինելու գնահատման չափանիշների մասին Համալսարանի կրթական քաղաքականությանը համապատասխան,

9.3.4. տեղեկացված լինելու Համալսարանի կանոնադրությանը և իրենց իրավասություններին և պարտավորություններին առնչվող ցանկացած իրավական նորմերի մասին,

9.3.5. բողոքարկելու՝ բուհի բողոքարկման քաղաքականության համաձայն,

9.3.6. զերծ լինելու բուհի ցանկացած անդամի հետապնդումից

9.3.7. արտահայտվելու, եթե որոշում է կայացվում իր դեմ

9.3.8. օրենսդրության կամ էթիկայի սկզբունքների ցանկանած ենթադրյալ խախտման մասին հայտնելու համապատասխան մարմնին՝ առանց իր համար անբարենպաստ հետևանքներ առաջանալու մտավախության,

9.4 Համալսարանի ուսանողը պարտավոր է՝

9.4.1. ծանոթանալ սույն Կանոնակարգին և Համալսարանի գործունեությունը որոշող քաղաքականություններին և կանոնակարգող փաստաթղթերին,

9.4.2. Համալսարանի ներսում կամ դրանից դուրս ցանկացած անձի կամ խմբի առնչությամբ չառաջարկել կամ չընդունել կաշառք կամ որև է այլ անօրինական ֆինանսական միջոց, չփորձել ստանալ կամ չստանալ որև է այլ անձնական օգուտ, որը կարող է ազդեցություն գործել իր ուսման կամ այլ անձանց աշխատանքի վրա,

9.4.3. Համալսարանի կանոնների համաձայն՝ համապատասխան մարմնին անմիջապես հայտնել կաշառելու կամ անձնական օգուտ ստանալու ցանկացած փորձի մասին,

9.4.4. չվատնել Համալսարանի ռեսուրսները կամ ոչ իրավաչափ ձևով օգտագործել նրա տնօրինության ներքո գտնվող անձնական կամ առևտրային , այդ թվում՝ մտավոր սեփականության մասին տեղեկությունները՝ անձնական շահ ստանալու նպատակով կամ ի շահ որևէ այլ անձի կամ խմբի,

9.4.5. ցուցաբերել հարգալից վերաբերմունք գիտական խորհրդի, ղեկավարների, ակադեմիական և օժանդակ անձնակազմի և մյուս ուսանողների նկատմամբ՝ պահպանելով էթիկական վարվեցողության ընդհանուր սկզբունքները, և դրական ու կառուցողական ներդրում ունենալ հաստատության ակադեմիական գործունեության մեջ,

9.4.6. ուսման կամ հետազոտական գործունեության ընթացքում պահպանել ակադեմիական ազնվության կանոնները և էթիկայի սկզբունքները,

9.4.7. չարտագրել այլոց աշխատանքը կամ չփորձել ձեռք բերել որևէ արտոնություն՝ ցանկացած ձևով դա խթանելու միջոցով,

9.4.8. ուսումնառության ընթացքում դրսևորել արժանապատիվ, ազնիվ և ճշմարիտ վարքագիծ,

9.4.9. զերծ մնալ այնպիսի արտահայտություններից կամ արարքներից, որոնք կարող են որևէ կերպ բացասական ազդեցություն ունենալ Համալսարանի ուսանողների և աշխատակիցների արժանապատվության վրա:

10. ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՏՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ՝

10.1 Համալսարանի յուրաքանչյուր Ներքին շահակից իր աշխատանքային կամ ուսումնական գործունեության ընթացքում էթիկայի կանոնները չպահպանելու դեպքում ենթարկվում է կարգապահական տույժի,

10.2 Համալսարանի էթիկայի նորմերի խախտման դեպքերում կիրառվող կարգապահական տույժերը հիմնված են արդարության, գաղտնիության և պատշաճ ծանուցման սկզբունքների վրա և համապատասխանում են գործող օրենսդրությանը, Համալսարանի կանոնադրությանը և ներքին կանոնակարգերին,

10.3 Համալսարանում կարգապահական տույժերի կիրառման դեպքում հաշվի են առնվում խախտման ծանրությունը և դրա հետևանքները, Ներքին շահակիցի մեղքի մասը, այդ խախտման կատարման և նախկինում նման խախտում կատարած լինելու հանգամանքները

10.4 յուրաքանչյուր Ներքին շահակից համալսարանի ուսանողների, աշխատակիցների և ղեկավար անձանց կողմից էթիկայի նորմերի ենթադրյալ խախտման դեպքի մասին գրավոր ներկայացնում է էթիկայի հանձնաժողովին,

10.5 Հանձնաժողովը էթիկայի նորմերի խախտման վերաբերյալ բողոքը ստանալուց հետո 3 օրվա ընթացքում բողոքի մասին գրավոր տեղեկացնում է շահագրգիռ կողմերին,

10.6 Էթիկայի նորմերի խախտման վերաբերյալ զեկուցում ստանալուց հետո 5 օրվա ընթացքում էթիկայի հանձնաժողովը քննարկում է բողոքը և որոշում.

10.6.1. բողոքում ներկայացված խախտման վերաբերյալ փաստերը հիմնավոր են թե ոչ,

10.6.2. ենթադրյալ խախտում համարվող փաստերը արդյոք համալսարանի աշխատակցի կամ ուսանողի էթիկական վարվեցողության կանոնների խախտումներ են,

10.7 էթիկայի կանոնների խախտման փաստը հիմնավորվելուց հետո էթիկայի հանձնաժողովը ծանուցում է աշխատակցին կամ ուսանողին գրավոր բացատրություն ներկայացնել՝ նշելով ժամկետը,

10.8 աշխատակցի կամ ուսանողի կողմից նշված ժամկետներում գրավոր բացատրություն չներկայացնելու դեպքում էթիկայի հանձնաժողովի կողմից

քննարկվում է աշխատակցին կամ ուսանողին համապատասխան կարգապահական տույժի ենթարկելու հարցը,

10.9 աշխատակցի կամ ուսանողի կողմից նշված ժամկետներում գրավոր բացատրություն ներկայացնելու դեպքում էթիկայի հանձնաժողովը 5 օրվա ընթացքում քննում է փաստերը և ներկայացված բացատրությունը, քննարկում աշխատակցին կամ ուսանողին համապատասխան կարգապահական տույժի ենթարկելու կամ չենթարկելու հարցը:

11. Համալսարանի ղեկավար, վարչական, ակադեմիական աշխատակազմի և ուսանողների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը՝

11.1. էթիկայի կանոնների խախտման առկայության դեպքում Համալսարանի ղեկավար, վարչական և ակադեմիական աշխատակցի նկատմամբ որպես կարգապահական տույժ կարող է կիրառվել.

11.1.1. նկատողություն,

11.1.2. խիստ նկատողություն,

11.1.3. աշխատանքային պայմանագրի լուծում,

11.2 աշխատակցի նկատմամբ տույժ կիրառում է Համալսարանի ռեկտորը, էթիկայի հանձնաժողովի ներկայացմամբ,

11.3 Համալսարանի ղեկավար, վարչական և ակադեմիական կազմի աշխատակիցները 1 ամսվա ընթացքում իրավունք ունեն բողոքարկել տույժի ենթարկվելու որոշումը,

11.4 Համալսարանի ղեկավար, վարչական և ակադեմիական կազմի աշխատակիցները որոշումը բողոքարկելու վերաբերյալ գրավոր բողոքը ներկայացնում են Համալսարանի ռեկտորին՝ նշելով բողոքարկման հիմքերը,

11.5 Համալսարանի ռեկտորը, քննարկելով ներկայացված բողոքը, կայացնում է որոշում,

11.6 Համալսարանի ուսանողի կողմից էթիկայի կանոնների խախտման առկայության դեպքում կիրառվում հետևյալ կարգապահական տույժերը՝

11.6.1. նկատողություն, որը կիրառվում է քննության ընթացքում արտագրելու կամ փորձելու արտագրել, որևէ չթույլատրված սարքավորում կիրառելու, այլ ուսանողի օգնելու կամ օգնելու փորձ կատարելու դեպքում , որոնց համար դասախոսը դադարեցնում է ուսանողի քննությունը և նրան հեռացնում քննասենյակից, կամ էթիկայի հիմնարար սկզբունքներից որևէ մեկը խախտելու դեպքում, երբ ուսանողը այն կատարել է առաջին անգամ,

11.6.2. խիստ նկատողություն, որը կիրառվում է նախորդ կետում նշված դեպքերում, երբ ուսանողը մեկ ուսումնական տարվա ընթացքում արդեն ստացել է մեկ նկատողություն,

11.6.3. համալսարանից հեռացում,

11.7 Ուսանողի նկատմամբ տույժ կիրառում է Համալսարանի ռեկտորը՝ էթիկայի հանձնաժողովի առաջարկով,

11.8 համալսարանի ուսանողները 1 ամսվա ընթացքում իրավունք ունեն բողոքարկել Հանձնաժողովի որոշումը՝ գրավոր բողոքը բողոքարկման հիմքերի և պատճառների հետ միասին ներկայացնելով մասնաճյուղի տնօրենին:

12. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ՝

12.1 Սույն կանոնակարգը հաստատում է համալսարանի գիտական խորհուրդը:

12.2 Կանանակարգում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ ՝ հետևյալ անձանց կամ մարմինների առաջարկությամբ.

1. ռեկտորի
2. գիտական խորհրդի անդամների
3. ուսանողական խորհրդի
4. որակի ապահովման վարչության
5. էթիկայի հանձնաժողովի